

ԱՌՒԴԻՏԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Վահան ԳԱՐԱԿՅԱՆ

Արցախի պետական համալսարանի ասպիրանտ

Բանալի բառեր. աուդիտ, վերահսկողություն, հարկ, տնտեսություն

Աուդիտորական ընկերությունում որակի ապահովմանն ուղղված ներքին մշակույթի ներդրումն ընկերության ղեկավարության պատասխանատվության հիմանական ոլորտներից մեկն է: Ընկերությունը պետք է հաստատի աուդիտի որակի վերահսկողության համակարգը, որը նախատեսված է ապահովելու կազմակերպության խելամիտ վստահությունը՝ առ այն, որ ինքն ու իր աշխատակիցները հետևում են համապատասխան ստանդարտներին, օրենսդրական և նորմատիվ ակտերի դրույթներին, իսկ հաշվետվությունը համապատասխանում է հաճախորդ կազմակերպության գործունեությանը:

Աուդիտի որակի ներքին վերահսկողության սկզբունքներն ու ընթացակարգերն որոշվում և հաստատվում են կազմակերպության ներքին ստանդարտներով և ենթակա են պարտադիր փաստաթղթավորման:

Անհրաժեշտ է, որ ներքին վերահսկողության ստորաբաժանումը պարբերաբար իրականացնի դիտարկումներ և վերլուծություններ՝ հնարավոր ռիսկերի ի հայտ բերման և կանխման նպատակով: Պետք է պարբերաբար կատարելագործվի ներքին վերահսկողության մեխանիզմները՝ հաշվի առնելով միջազգային փորձը և ընկերության պրակտիկ աշխատանքի կատարման դիտարկումների արդյունքները:

Աուդիտորական կազմակերպությունը պետք է ստեղծի ու պահպանի որակի վերահսկողության համակարգ, որը ներառում է այնպիսի կանոններ ու ընթացակարգեր, որոնք վերաբերում են հետևյալ տարրերից յուրաքանչյուրին՝

- ընկերությունում որակի համար ղեկավարության պատասխանատվությունը,
- վարքագծի համապատասխան պահանջները,
- պատվիրատուի հետ հարաբերությունների և հատուկ առաջադրանքների ճանաչումն ու պահպանումը,
- մարդկային ռեսուրսները,
- առաջադրանքի իրականացումը,

- վերահսկումը (մոնիտորինգը):

Աուդիտորական ընկերության աշխատակիցները պարտադիր կարգով պետք է տեղեկացվեն վերոնշյալի մասին, և նրանցից յուրաքանչյուրը պետք է անձնական պատասխանատվությամբ հետևի աուդիտի որակի ապահովմանը:

Աուդիտի որակի ներքին հսկումն իրականացվում է հիմնականում հետևյալ երեք փուլով.

-նախնական,

-ընթացիկ,

-հետզործառնական:

Նախնական ներքին հսկողությունն իրականացվում է աուդիտի կազմակերպման ընդհանուր պլանը կազմելիս: Ընթացիկ ներքին վերահսկողությունն իրականացվում է ներքին հսկողությունը կարգավորող միասնական պահանջների սահմանմամբ: Հետզործառնական որակի ներքին հսկողությունը բնութագրվում է աուդիտի յուրաքանչյուր մասնակցի կատարած աշխատանքների ստուգմամբ:

Աուդիտ իրականացնելիս յուրաքանչյուր ներգրավված աշխատակից՝ լինի աուդիտոր, օգնական, թե թիմի այլ աշխատակիցներ, պետք է հստակ իմանան իրենց լիազորություններն ու պարտավորությունները, քանի որ յուրաքանչյուրն ունի իր պատասխանատվության բաժինը կատարված աշխատանքում, հատկապես՝ աուդիտորը, ով կրում է արդյունքի հիմնական պատասխանատվությունը: Ընդհանուր առմամբ՝ թիմի յուրաքանչյուր աշխատակից պետք է համագործակցի մյուս աշխատակիցների հետ, մեկը մյուսին առաջարկի իր օգնությունը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ աուդիտի իրականացումը, աուդիտի որակի ներքին հսկման տեսանկյունից, ներկայացնում է աուդիտորական կազմակերպությունում աուդիտի նպատակի իրականացման, վերահսկման, ռիսկերի կանխատեսման ու կանխման և մասնագիտական խորհրդատվական ընթացակարգերի ամբողջություն:

Աուդիտի որակի պահպանման ներքին վերահսկողության մեխանիզմներից գատ՝ վճռորոշ դեր ունի արտաքին վերահսկողությունը:

Աուդիտի որակի արտաքին վերահսկողությունը մեծ դեր է խաղում աուդիտորական ծառայության որակի բարձր մակարդակ ապահովելու գործում: Այս առումով 2000թ. Եվրամիության կոմիտեն հրատարակել է Եվրամիության երկրների համար պարտադիր իրականացման պահանջ կրող պարտադիր

աուդիտի որակի վերահսկման նվազագույն պահանջների մասին առաջարկներ: Ժամանակակից տնտեսական պայմաններում համաշխարհային պրակտիկայում կիրառվում են աուդիտորական գործունեության որակի վերահսկման երկու հիմնական մոդելներ. առաջին մոդելի դեպքում վերահսկողությունն իրականացնում է պետությունը, իսկ երկրորդ մոդելն ենթադրում է հանրային վերահսկողություն, որն իրականացնում են համապատասխան մասնագիտական կառույցները:

ԼՂՀ-ում աուդիտորական գործունեությունը կարգավորող պետական լիազորված մարմինը հանդիսանում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» ԼՂՀ օրենքի՝ լիազորված մարմինը կազմակերպում և իրականացնում է հսկողություն՝ աուդիտ իրականացնող անձանց կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների և աուդիտորների վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ: Սակայն ԼՂՀ-ում չեն գործում մասնագիտական կառույցներ, և աուդիտի որակի բարձրացման համար անհրաժեշտ ենք համարում այդպիսի կառույցի ստեղծումը, որը.

-կատարելագործի ԼՂՀ-ում գործող հաշվապահների և աուդիտորների մասնագիտական կարողությունները՝ որակավորման, շարունակական կրթության, համապարփակ մասնագիտական օժանդակության և որակի հսկողության, ինչպես նաև հաշվապահության և աուդիտի պատվիրատուների հետ մշտական փոխադարձ կապի միջոցով,

-կիրականացնի աուդիտի միջազգային ստանդարտների, արժանահավատության այլ ստանդարտների, վարքագրքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների շարունակաբար թարմացում և իրագեկում:

Այսպիսով, համախմբելով վերոնշյալը, փաստում ենք, որ աուդիտորական գործունեության վերահսկողության բարձր մակարդակի ապահովման համար անհրաժեշտ է աուդիտորական ընկերությունում անընդհատ կատարելագործվող որակի վերահսկողության համակարգերի ներդնումը և արտաքին վերահսկության իրականացումը պետության կողմից, ինչպես նաև մասնագիտական կառույցների գործունեությունը:

Վահան ԳԱՐԱԿՅԱՆ

Աուդիտի որակի վերահսկողության խնդիրները ԼՂՀ-ում

Բանալի բառեր. աուդիտ, վերահսկողություն, հարկ, տնտեսություն

ԼՂՀ-ում աուդիտորական գործունեությունը կարգավորող պետական լիազորված մարմինը հանդիսանում է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Համաձայն «Աուդիտորական գործունեության մասին» ԼՂՀ օրենքի՝ լիազորված մարմինը կազմակերպում և իրականացնում է հսկողություն՝ աուդիտ իրականացնող անձանց կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների և աուդիտորների վարքագծի նորմերի պահպանման նկատմամբ: Սակայն ԼՂՀ-ում չեն գործում մասնագիտական կառույցներ, և աուդիտի որակի բարձրացման համար անհրաժեշտ ենք համարում այդպիսի կառույցի ստեղծումը:

Ваган ГАРАКЯН

Вопросы контроля над качеством аудита в НКР

Ключевые слова: аудит, контроль, налог, экономика

Полномочный орган регулирующий аудит в НКР является министерство финансов и экономики. Согласно закону об "Аудиторской деятельности", полномочный орган организует контроль над деятельностью аудиторов для проведения аудита, а также аудиторских компаний в соответствии с нормами законодательных или нормативных требований, а также кодекса поведения. Тем не менее, в Нагорном о, считаем необходимым создание такой организации.

Vahan GARAKYAN

Issues related to quality control in NKR

Keywords: audit, control, tax, economy

Authority governing audit in NKR is the Ministry of Finance and Economy. According to the law on "Audit activity", the Authority will organize control over the activities of auditors for the audit and audit companies in accordance with legal or regulatory requirements, as well as the code of conduct. However, in Nagorno-on, we consider it necessary to create such organanizatsion.